ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱԳՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովակիմյան

Ի պատասխան Ձեր՝ 11.02.2026թ. թիվ 01/11/130 գրության, ստորև Ձեզ են ներկայացվում վերջին՝ ՀՀ 2022թ. մարդահամարի[1] արդյունքներով ամփոփված ՀՀ-ում առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հայցվող տվյալները.

ՀՀ-ում առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունները՝ համաձայն 2022թ. մարդահամարի արդյունքներով ամփոփված տվյալների[2]

մարդ

Ազգային փոքրամասնություն	Մշտական բնակչության թվաքանակ
Եզդի	31 079
Ռուս	14 076
Ասորի	2 755
Քուրդ	1 663

Միաժամանակ տեղեկացվում է նաև, որ 2022թ. մարդահամարի արդյունքներով թվով 545 անձ հրաժարվել են պատասխանել մարդահամարի հարցաթերթով նախատեսված իրեց ազգությանը վերաբերող հարցին[3]: Նշվածի առնչությամբ մեթոդաբանական պարզաբանումները սահմանված են նաև ՄԱԿ-ի «2020թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներով»[4]:

[1] Իրականացված 2022թ. հոկտեմբերի 13-ի դրությամբ:

[2] Առավել մանրամասն տես՝«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի մարդահամարի հիմնական արդյունքները» հրապարակման 5-րդ բաժնի ներքո՝ table 5.1.xlsx աղյուսակում:

[3] Համաձայն Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի 21-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված դրույթների՝ համատարած հաշվառման հարցաթերթի հարցերին պատասխանելուց հրաժարվելը, բացառությամբ ազգության, լեզվին և կրոնական դավանանքին առնչվող հարցերի, առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

[4] Տես՝ https://armstat.am/file/doc/99538798.pdf հղման ներքո. «Գլուխ XII. Էթնոմշակութային բնութագրեր»,մշակված Եվրոստատի հետ համագործակցությամբ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ, Նյու Յորք և Ժնև, 2015 (ռուսերեն):

ք. Երևան, 0010
Հանրապետության պողոտա,
Կառավարական 3 շենք
☎: (+374 11) 52-42-13
Էլ. փոստ: info@armstat.am
https://www.armstat.am

Հարգանքով՝

2/16/2026

ՆԱԽԱԳԱՀ
Ս.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

X

Signed by: MNATSAKANYAN STEPAN 1107570328

Կատարող՝ Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
Հեռ. 011 52 45 28